ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 90

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Երևան քաղաքի Հ.Արղության փողոց N8/6 և Ս.Մալխասյանց փողոց N25 հասցեներում գտնվող 0.1952 հա և 0.36406 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր	Երևան քաղաքի Հ.Արղության փողոց N8/6 և Ս.Մալխասյանց փողոց N25 հասցեներում գտնվող 0.1952 հա և 0.36406 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված՝ գործում առկա «Գազպրոմ Արմենիա» ՓԲ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների գրություններով ներկայացված պահանջները ապահովելու պայմանով (կցվում են):
- ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված պայմանը (կցվում է):

4. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևանի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «31» «մարտի» 2023 թ.